

ԼՈՒԻ ՓԱՍՏԵՕՌ

(1822-1895)

ԻՐ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

(Շար. Բազմ. 1954, թիւ 1-2, էջ 36)

Դժբախտ օր մը, 23 Հոկտ. 1888-ին, Փաստէօնի լեզուն անդամ մը եւս կ'անշարժանար ու կը կորսնցնէր խօսելու հնարաւորութիւնը: Ժամանակի ընթացքին, որքան ալ որ պղտիկ բարեւաւում մը տեղի կ'ունենար, ան մինչեւ կենացը վերջին օրը կը դատապարտուէր համրութեան: Փաստէօնեան հաստատութեան բացման օրը, մեծ գիտնականը՝ տարիներու եւ հիւանդութեան բեռն տակ կը լքած՝ կ'ըսէր. «Աւա՛ղ, սրտակէշ թախիծով այս չէնքէն ներս կը մտնեմ, իբրեւ մարդ մը՝ որ ժամանակէն պարտուած է ալիւս»: Եւրօպայի բոլոր երկիրներուն մէջ, 1892-ին մեծ շուքով կը տօնուէր բազմալեզուական ծերունիին եօթանասունամեակը: Փաստէօն ալիւս ամէն տեսակ փառքի եւ պատիւի տիրացած էր, բացի անկէ՝ ան հիմը դրած էր նոր վարդապետութեան մը, որուն պաշտամունքին նուիրուած էին Ռուի, Շամպերլանի, Մեյնիքոֆի ու Քալմեթի պէս երիտասարդ ու խանդավառ առաքեալներ, որոնք անհետեւանք պիտի չձգէին մեծ վարդապետին գործը: Այսպէսով, Փաստէօն՝ արժանիքներով լի երիտասարդ գիտնականներու սերունդ մը պատրաստած ըլլալու, եւ անոնց գիտութեան ալ ականատեսը ըլլալու, փառքն ու երջանկութիւնն ալ կը վայելէր:

Ան փստահ էր ալիւս, թէ իր ձգած թանկագին ժառանգը, անվրէպ ապագային պիտի փոխանցուէր, ու կրնար՝ առանց սրտի թմեռադուրդն կսկծի՝ յաւերժութեան դուռը բխել: Բայց նախ քան այդ, 1893-ին, կին մը կու գար իրեն ըսելու. «Անշուշտ ուսումնասէր ուսանող-

ներ կան, որոնք անհաճախելի գործի չեն կրնար լծուիլ, որովհետեւ ապրիլ պէտք է: Կը փախաքիմ ձեր տրամադրութեան տակ դնել 3000 Փրանքնոց չորս պարգեւ, յատկացուելու համար ձեր կողմէ նշանակուած չորս երիտասարդներու: Զեղմէ միակ խնդրանք մը ունիմ՝ անունս պաշտնի պահեցէք»: Այսպէսով Փաստէօնի բարոյական կորույն ու հանճարը ամէնուն կողմանէ պաշտամունքի առարկայ դարձած էր: Մին՝ ի սէր գիտութեան դրամ կը տրամադրէր, ուրիշ մը՝ իր աղօթքովը երախտիքը կը յայտնէր, իսկ շատեր ալ՝ անյոյս հիւանդի մը համար իրմէ ճար մը կը պաղատէին:

Վերջապէս յոյսի եւ բարիքի այդ պայծառ ջանքը կը մարէր: Անոր մասին էր որ բարի Պիոն ժամանակին ըսած էր. «Ինչ բանի համար որ մօտենալու ըլլայ՝ կը լուսաւորէ ու կը լուսաբանէ»: Պահ մը այնպէս թուեցաւ, թէ 1 Նոյեմբեր 1894-ին Իւոնիմի-ի հետեւանքով հասած էին Փաստէօնի վերջին վայրկեանները, բայց չորս ժամ շարունակ զգայազուրկ մնալէ ետք, կրկին ինքզինքը կը գտնէր ու նոր յոյսեր կը ներշնչէր շրջապատին: Արդարեւ ալ, անցան ամիսներ, եկաւ նոր տարին, Աղեքսանդր Տիւմայ՝ ծագեցողութեան մը ձեռքին՝ հիւանդին սենեակէն ներս կը մտնէր ու կ'ըսէր. «Փախաքեցայ նոր տարին լաւ սկսիլ, սրտաբուխ բարեմաղթութիւններս կը յայտնեմ ձեզ»: Դժբախտաբար միւլիոնաւոր մարդկանց մաղթանքները ի դօրու չեղան փրկելու Փաստէօնը, ան կատարեալ անդամաւոր մը դառնալով, 27 Սեպտեմբեր 1895-ին հրաժեշտ կու տար իր բեղմնաւոր կեանքին, ճիշտ այն պահուն՝ երբ իր սիրելիները կը ջանային կաթիլ մը կաթ խմցնել իրեն:

Փաստէօն, ալ ոչ եւս էր, բայց իբրեւ ժառանգ՝ մարդկութեան կը ձգէր անմահ գործեր, որոնք միշտ պիտի մնան կենդանի ու կենսունակ:

Բ. — ԾՆՈՂԱՍԵՐԸ

Փաստէօն, 14 Յուլիս 1883-ին, իր ծընդագոյնը՝ Տոլ կը մեկնէր, ներկայ ըլլալու համար իր հայրենական տանը վրայ դրուելիք յիշատակարանին տօնակատարութեանց: Ամայացած էր այդ գեղջկական տնակը, որուն մէկ խցիկին մէջ ծնած էր ինք 27 Դեկտ. 1822-ին:

Ժամանակի ընթացքին, մահը քանիցս եկած բախած էր անոր դրանը, ու մէկիկ մէկիկ տարած էր՝ հայրը, մայրը եւ քոյրերը: Միակ վերապրողը այդ բազմանդամ ընտանիքէն՝ անցեալին քաղցր յուշերով ներշնչուած մեծ գիտնականը՝ հետեւալ կերպով կ'ողբէր խնկելի ծնողացը քաղցր յիշատակը. «Թոյլ տուէք ինձ ըսելու, թէ մինչեւ հոգիւս խորը յուզուած եմ: Զեր համակրանքը այս յուշարարին վրայ կը միացնէ կենացս հրապոյրն ու խանդը կաղմոգ երկու մեծ երեւոյթներ՝ գիտութեան եւ հայրենական յարկին հանդէպ տածած սէրս: Ո՛հ, հայր իմ եւ մայր իմ, ո՛հ առ յաւիտ կորսուած սիրելիներս, որ ա՛յնքան համեստօրէն ապրեցաք այս տնակին մէջ, ամէն ինչ ձեզ կը պարտիմ: Քաջարի մայր իմ, դուն էիր որ եռանդալից յոյզերդ մէջս ներմուծեցիր: Եթէ գիտութեան վեհութիւնը հայրենիքիս մեծութեանը ընկերակից ըրած եմ, պատճառը այն է՝ որ տղորուած եմ քու ներշնչած զգացումներովդ: Եւ դուն, սիրելի հայր, որ քու արհեստիդ պէս դրժնդակ կեանք մը անցուցիր, ինչե՛ր կըրնայ ընել համբերութիւնը երկարատեւ ճիւղերու ընթացքին: Քեզ կը պարտիմ առօրեայ աշխատութեանս մէջ ցոյց տուած յամառ տոկունութիւնս: Դուն՝ քու մէջդ կը կրէիր ոչ միայն յարատեւող այն յատկանիշները, որոնք կեանքը օգտակար կը դարձնեն, այլ նաեւ հիացումը մեծ մարդոց եւ մեծութեանց հանդէպ: Դէպի բարձրերը նայիլ, միշտ աւելի զարգանալ եւ տե-

ւականօրէն ազնուանալ, ահա թէ ի՛նչ սորվեցուցիր ինձ: Տակաւին աչքիս առջեւ կը տեսնեմ քեզ, օրուան խոնջէնքէն ետք՝ երեկոյեան՝ ժամանակակից պատմութեան զրբէրէն մէկուն մէջ մարտական դէպքի մը ընթերցանութեամբը զբաղուած, որ քեզի յիշել կու տայ այն շրջանը, որուն ականատեսը եղած ես: Ինձ կարգալ սորվեցնելով, հոգածութիւնը կը ստանձնէիր Պրանսայի մեծութիւնը ուսուցանելու»:

«Օրհնեալ ըլլաք երկուքդ ալ ձեր յիշատակովը, սիրելի ծնողք իմ, ու թոյլ տուէք ինձ ձեզ վերադարձնելու այն յարգանքը, որ այսօր կը ձօնուի այս տանը»:

Փաստէօնի սէրը նոյնքան մեծ էր իր քոյրերուն հանդէպ ալ: Տակաւին Փարիզի մէջ ուսանող եղած միջոցին, կը նախընտրէր զրկուիլ անձնական հաճոյքներէ, խընայողութիւններ կ'ընէր ու զանոնք նուէրներու կը յատկացնէր:

Ահա թէ ինչպէս կ'արտայայտուէր հայրը այս մասին. «Ստացանք զրկած նուէրներդ, քոյրերուդ կը ձգեմ չնորհալալութիւն յայտնել: Ըստ իս, հազար անգամ նախընտրելի պիտի ըլլար, որ այդ դրամը քսակիդ մէջ մնար, եւ դայն՝ քեզ հաճոյք պատճառող ընկերներու հետ՝ ճաշարանի մը մէջ ծախսէիր եւ լաւ անունդ առնէիր: Սիրելի բարեկամս, սակաւաթիւ ծնողաց վերապահուած երջանկութիւն մըն է այսպիսի խօսքեր ուղղելը Փարիզ բնակող իրենց դաւկին: Արտայայտութիւններէս շատ աւելի մեծ է գոհունակութիւնս»: Փաստէօնի ծնողասիրութենէն եւ ծնողաբաղձութենէն վերջին դրուագ մը եւս:

Էֆով Նորմալ մտնելու գիտաւորութեամբ 1838-ին, 16 տարեկանին, Փարիզ կը մեկնէր. այս բաժանումը խիստ անընդհատ կերպով կ'աղղէր Փաստէօնի վրայ: Վերջին ծայր ջղայնոտ կը դառնար. ո՛չ ախորժակ ունէր եւ ոչ քուն, այն աստիճանի՝ որ վարժարանին տնօրէնը կը ստիպուէր լուր տալ ծնողացը:

Հայրը անմիջապես Փարիզ կը փութար, ու յուզուած կը բացազանչէր. «Քեզ տեսնելու եկայ»: Ահա թէ ինչպիսի խանդով Փաստէօն կապուած էր իր ծնողացը:

Գ. — ԸՆՏԱՆԵՍԵՐԸ

Որքան ծնողասէր, նոյնքան ալ ընտանեակէր էր Փաստէօն: Ան երկրորդ անգամ Փարիզ երթալով, չըջանաւարտ կ'ելէր Էֆու Նոքսալէն, ու Սթրասպուրի համալսարանին դասախօս կը կարգուէր:

Այդ համալսարանին տնօրէնն էր Լորան անունով խիստ պարկեշտ եւ ազնիւ անձնաւորութիւն մը, որուն մէկ աղջկան՝ Օր. Մարիի ձեռքը կը խնդրէր, հետեւեալ նամակով. «Տիար, իմ եւ ձեր ընտանիքին համար խիստ լուրջ խնդրանք մը պիտի կատարուի քանի մը օրէն, պէտք կը համարեմ ձեզի հետեւեալ լուսարանութիւնները տալու, որոնք պիտի դիւրացնեն ձեր դրական կամ ժխտական պատասխանը:

«Հայրս, Ժիւրիայի մէկ փոքրիկ դիւղէն՝ Արպուայի մէջ կաշեղործ է. անցեալ տարի մայրս կորսնցնելու դժբախտութիւնը ունեցած ըլլալու քերութիւն, քոյրերս ստիպուած են զայն փոխարինելու:

«Ծնողքս բարեկեցիկ վիճակ մը ունի, բայց հարստութենէ դուրի է, ընդամենը 50,000 Փրանքը չ'անցնիր մեր ունեցածը: Գալով ինծի, շատոնց ի վեր որոշած եմ ինձ իյնալիք բաժինը ամբողջապէս քոյրերուս ձեռքը: Որով, ըսել է թէ հարստութիւն չունիմ:

«Ամբողջ ունեցածս հետեւեալն է. կատարեալ առողջութիւն մը, բարի սիրտ մը եւ համալսարանին մէջ գիւրք մը: Հայրս անձամբ Սթրասպուրի պիտի գայ, ամուսնական այդ դիմումը կատարելու համար: Դեկտ. 27-ին 26 տարեկան եղայ»:

Ահա թէ ինչպիսի պարկեշտութեամբ ու պարզութեամբ Փաստէօն կ'ընտրէր իր կե-

նացը ընկերուհին: Փաստէօն տեսնելով պարոն Լորանի պատասխանին՝ յապաղում մը, այս անգամ կը դիմէր տիկին Լորանի. «Օր. Մարին թող չկառչի նախնական տըպաւորութիւններու անմիջական աղբեղութեանց, որոնք ինձ համար մի միայն անպատկառ կրնան ըլլալ: Ոչինչ ունիմ որ կարենայ հրապուրել զեռաւոր աղջիկ մը, բայց յիշողութեանս ապաւինելով՝ կրնամ ըսել՝ թէ երբ լաւ մը կը ճանչցուիմ, կը սիրուիմ»:

Օրիորդին հետ թղթակցելու արտօնութիւն ստանալէ ետք, անոր կը դիմէր.

«Միակ խնդրանք մը ունիմ, զիս հապճեպով մի՛ դատէք: Կրնաք դիւրաւ սխալիլ, ժամանակի ընթացքին է որ պիտի տեսնէք թէ խտաբարոյ ու երկչոտ արտաքինիս ներքեւ, որ ձեզի անհաճոյ պէտք է թուի, սիրտ մը պիտի դռնէք ձեզի համար անսահման սիրով ու դուրսով զեղուն»:

Ամուսնութիւնը տեղի կ'ունենար 29 Մայիս 1850-ին: Փաստէօն, ըստ իր խոստումին, երջանկացուց իր ընտանեկան բոյնը, իսկ տիկինն ալ իր կարգին՝ պահպան հրեշտակ մը հանդիսացաւ ամուսնոյն հանդէպ, շարունակ զայն քաջալերելով ու խրախուսելով: Միակ դժգոհանքը որ տիկ. Փաստէօն զգաց իր ամուսնական վեանքի ընթացքին, տրտուջ մը եղաւ սանձելու համար իր ամուսինին անսահման նուիրումը դէպի գիտութիւնը: Երբ Փաստէօն կը նշմարէր կնոջը մտահոգութիւնները, զանոնք փարատելու համար սովորութիւնը ունէր ըսելու. «Զքեղ սպառնալ սերունդներուն պիտի ժառանգեմ»:

Իրապէս ալ, Փաստէօնի ամուսնութենէն ետք, փառքի ճամբաները իր առջեւ լայնօրէն կը բացուէին ու իր հանճարը կատարելութեան կը հասնէր: Իսկ ընտանեկան բոյնը՝ բուրաստանի մը կը վերածուէր, երկու աղջիկ զաւակներու ու ման-

չու մը ծնունդովը նուիրագործուած: Դժբախտաբար այդ բուրաստանին վրայէն չուտով մահուան շունչը պիտի անցնէր, ու պիտի սկսէր վաղահաս տերեւութալը: Անդրանիկ աղջիկը, 1864-ին թիֆոյէ վարակուելով կը մեռնէր Սեպտեմբերի ընթացքին:

Փաստէօն այս առիթով իր հօրը դրած նամակին մէջ անսահման թախիծով կ'ողբար իր վիշտը. «Անկարելի է ինձ չմերթիւնել՝ բարութեամբ, կայտառութեամբ ու երջանկութեամբ զեղուն հէգ զաւակս, որ վերջացող դժբախտ տարին խլեց զայն մեր զուգուրանքէն: Քիչ ժամանակէն անիկա բարեկամ մը պիտի ըլլար մօրը, ինձ եւ բոլորիս: Ներողամտութիւնը կը խնդրեմ, սիրելի հայր, այս ախուր յիշատակները թարմացնելու: Անիկա հիմա երջանիկ է, խորհինք մնացողներուն վրայ, ջանալով, մեր կարելիութիւններու սահմանին մէջ, դերձ պահել զանոնք այս կեանքին դառնութիւններէն»:

Նախ քան Փաստէօնի ամուսնութիւնը, 1 Յունուար 1848-ին, նոր տարւոյ առթիւ մայրը իր մաղթանքները բանաձեւելով կը դրէր. «Ինչ որ ալ պատահելու ըլլայ, երբեք մի՛ վշտահարիր: Բանազուշանք մըն է կեանքը: Մնաս բարով, հոգեակս»:

Զարագուշակ զուգադիպութեամբ մը, վեց ամիս ետքը, մօրը յանկարծական մահովը յաւիտենականութեան կը վերածուէր մայրական «մնաս բարով»ը:

Փաստէօն տակաւին դառնութեան բաժակը ամբողջապէս ըմպած չէր. մօրն ու զաւակին մահուան կը յաջորդէր հօրը կորուստը:

Շերամներու տարօրինակ մէկ հիւանդութիւնը ուսումնասիրելու համար, 1865-ին Ալէ կը մեկնէր, հոն հասնելէն քանի մը օր ետքը, Արպուայէն հեռադիր մը կը ստանար, իր հօրը ծանր կերպով հիւանդ ըլլալը տեղեկացնող:

Փաստէօն անմիջապէս հոն կը փութար,

շարագուշակ նախազգացումէ մը խթանուած, ներքին ճայն մը իրեն կ'ըսէր. «Ինչպէս մօրդ եւ զաւակդ պարագային, նոյնպէս ալ հօրդ հիւանդութեանը, առիթը պիտի չունենաս վերջին անգամ մըն ալ զինքը տեսնելու»: Այդ դառն մտածումը լիովին իրականացած կը դառնէր, երբ Աուպուա կը հասնէր: Ամայացած տանը մէջ հօրը դադարը կը հանդէպէ: Կսկիծը սրտին, խցիկի մը մէջ առանձնանալով, նոյն զիջերը հետեւեալ տողերը կը դրէր կնոջն ու զաւակներուն. «Սիրելի Մարիս, սիրելի զաւակներս, հէգ մեծ հայրիկը ալ ոչ եւս է, այս առաւօտ հողին յանձնեցինք: Ան կը հանդէպ փոքրիկ Ժանի ոտքերուն կողքին: Իմ վշտիս մէջ, վերջինին (Փաստէօնի քոյրն է) ալ հոն տեղաւորելու բարի մտածումը՝ զիս երջանկացուց, եւ յոսով եմ որ օր մը ինձ հնարաւոր պիտի ըլլայ զանոնք միացնել սիրելի մօրս ու քոյրերուս նշխարներուն, մինչեւ որ ինձ ալ վիճակուի երթալ անոնց միանալու: Մինչեւ վերջին վայրկեանը յուսացի զինքը տեսնել, անգամ մը եւս զինքը համբուրել, մխիթարել զայն՝ բազուկներուս մէջ սեղմելով, բայց կայարան հասնելուս, արդէն Մալէնէն եկած սղակիր քեռորդիներուս ներկայութիւնը տեսայ: Այն ատեն համոզուեցայ, թէ այլեւս զերեզմանատուն երթալու համար եկած էի: Սիրելի Սեսիլ (Փաստէօնի աղջիկներէն մին է), քու առաջին անգամ հաղորդութիւն առած օրդ մեռաւ ան: Կարծես նախազգացումը ունեցած էի, երբ վերջին շունչը տուած պահուն՝ քեռէ կը խնդրէի որ Աուպուա գըտնուող պապիկին համար ալ աղօթես: Աստուծոյ զոհունակութիւն պատճառած ըլլալու եւ աղօթքներդ, թերեւս հէգ փոքրիկ Ժանին (Փաստէօնի վաղամեռիկ աղջիկն է) հետ ան լսեց զանոնք ու հրճուեցաւ: Ամբողջ օրը մտաբերեցի հէգ հօրս խանդաղատալից արտայայտութիւնները: Երեսուն տարիներէ ի վեր, իր միակ ու

տեւական մտահոգութիւնն էր: Ամէն ինչ անոր կը պարտիմ: Երիտասարդութեանս՝ զիս հեռու պահեց գէշ ընկերներէ, աշխատիլ սորվեցուց եւ անբասիր ու օգտակար կեանքով ինձ օրինակ հանդիսացաւ: Այս մարդը՝ իր հոգիին ու նկարագրին աղնութեամբը՝ իր գրաւած դիրքէն դերադաս հանդիսացաւ, դատելու համար երեւոյթները: Երբեք չսխալեցաւ, որովհետեւ շատ լաւ գիտէր, թէ մարդն է որ պատիւ կը բերէ դիրքին, եւ ոչ թէ դիրքն է որ պատուաբեր կը դառնայ մարդուն: Սիրելի Մարիս, առիթը չունեցայ ճանաչուլ զայն այն շրջանին՝ երբ մօրս հետ չարքաշօրէն կ'աշխատէր, միասնաբար իրենց սիրելի դաւակները մեծցնելու: Մասնաւորապէս ինձ համար, շատ բան ըրին անոնք, վճարելու համար դրքերս ու դպրոցական ծախսերս:

Տակաւին աչքիս առջեւն է սիրելի հայրըս: Մարմնական աշխատանքներէ ետք, իր պարապոյ ժամերը ընթերցանութեան նուիրելով՝ տեւականօրէն զարգանալու, դժագրելու, կամ փայտի վրայ քանդակելու մարմնաշէն բռնուած էր: Մօտակայ անցեալին մէջ, ան նկարներէս մին ցոյց կու տար, որուն վրայ խաչանիչ մը դրած էր, զնահատանքի արժանի միակ կէտը մատնանիչ ընելու համար: Չարգանալու եւ սորվելու անյադ պապակէն կը տառապէր: Ականատեսը եղած եմ՝ դրիչը ձեռքին՝ քերականութեան գրքեր բազմաթիւ եւ մեկնաբանելու, 40-50 տարեկանին կարենալ սորվելու համար այն ինչ որ չէր կրցած ուսանիլ մանկութեանը դժբախտ տարիներուն: Ինձ հանդէպ տածած սիրոյն ամենագոյն արտայայտութիւնը պէտք է նկատել այն երեւոյթը՝ թէ ոչ մէկ ատեն իր հօրենական գործով ցանկութիւններու եւ ակնկալութիւններու չխառնուեցաւ: Որովհետեւ, իմ հաւանական յառաջադիմութեանս մէջ ան կ'ընդնդմարէր զայն իրականացնող սպառնիչ ճիգը, ու այդ ճի-

գին մէջ՝ նկատի ունէր առողջութիւնս, որ կրնար վտանգուիլ: Թէեւ, այնպէս՝ ինչպէս որ ինքն էր, եւ այնպէս՝ ինչպէս որ այսօր զինքը աւելի պայծառօրէն կը տեսնեմ, իմ գիտական ասպարէզիս մէջ ձեռք անցուցած մէկ քանի յաջողութիւններս, զինքը հպարտացուցած ըլլալու են ու սիրտը ուրախութեամբ լեցուցած: Իր դաւակն էի, իր անունը կը կրէի, այն դաւակը՝ որուն առաջնորդն ու խորհրդատուն եղած էր: Ո՛հ, հէյ հայր, երջանիկ կը զգամ խորհելով, որ կրցած եմ քեզ գոհունակութիւն պատճառել:

Հոգեկան կատարեալ վայելք մըն է կարգաւ այս ձօնը նուիրուած հօր մը յիշատակին: Ան պանծացումն է հօր մը արժանիքներուն զնահատանքին, եւ դաւակն մը երախտագիտական ջինջ զգացումներուն: Երանի այն դաւակին, որ հետեւելով Փաստէօնի օրինակին, կարող է բանաձեւել իր որդիական սէրն ու զնահատանքը այսքան հանգամանօրէն ու պերճօրէն, ու երանի այն հօր՝ որ կրցած է այդ բիւրեղ զգացումները ներշնչել իր դաւակներուն:

Փաստէօն, հօրը մահուանէն քանի մը ամիս ետք դժբախտութիւնը կ'ունենար Քամիլ անունով երկամեայ աղջիկը կորսնցնելու: Իսկ տարի մը ետքն ալ հէյ Սեփիլ թիֆօյէ վարակուելով, կը մեռնէր ճամբորդութեան մը ընթացքին:

Այս անգամ, ինչպէս նախորդ պարագաներուն, մահը դարձեալ դաժանօրէն անողորմ կը գտնուէր, զլանալով Փաստէօնի՝ իր մահամերձ դաւակին ճակտին հրաժեշտի համբոյր մը դրոշմելու միտքարութիւնը:

Ինչպէս որ տեսանք, ճակատագրի անողորմ հարուածներուն ներքեւ յաջորդաբար կ'իյնային մայրը, հայրը, քոյրերը եւ երեք սիրասուն դաւակները, կատարեալ տերեւութաւ մըն էր, որ կ'ամայացնէր ու մահուան չարաչուք քողովը կը ծածկէր Փաստէօնի ընտանեկան անդամները:

Քանդուած այդ բոյնէն զոյգ մը ապաւէններ կը մնային՝ մանչ մը եւ աղջիկ մը:

Փաստէօն, հակառակ իր փափուկ կողմին ու կաթնածաղարկ եղած մարմնոյն, տարօրինակ կերպով ոչ միայն կը տոկար սեւ ճակատագրի այդ հարուածներուն, այլ նաեւ՝ այդ դժբախտ օրերուն, իր կենացը ամենաբեղուն շրջանը կը բոլորէր:

Դառնութիւնները չկրցան իր կորովն սպառել ու ամլութեան դատապարտել: Ան կը խորէր պարապութենէն, ու յա-

ճախ կը բացադանէր իր շուրջիններուն. «Այն օրը որ պարապ կ'անցընեմ, ինձ կը թուի թէ կեանքէն բան մը կը դողնամ»: Հաղիւ թէ մահուան չարագուշակ ուրուականը պահ մը հեռացած կը թուէր Փաստէօնի ընտանեկան բոյնէն, կը պայթէր 1870-ի ահաւոր ու նուաստացուցիչ պատերազմը:

ԲԺՇ. Պ. ՄԻՍԱԲԵԱՆ

(Շարունակելի)

ՄՈՒՐԱՏ - ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՆԱԽԿԻՆ ՍԱՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Գոհացում տալու համար դիտողութեան մը որ ուղղուած էր «Բազմավէպ» խմբագրութեան ԲԺ. Արզումանեանի կողմէ, պարտք կը զգանք անհրազոտաւ «Բազմավէպ» 1953 թուականի Յուլի-Յուլիս միացեալ թիւերուն մէջ (էջ 156-160), նիւթ-Յուլիս միացեալ թիւերուն մէջ (էջ 156-160), տեսնալ յաւելուածական ճշգրտումներով:

1922-ի Կ. Պոլսոյ մէջ դադարեալ Միւթիւնը վերակազմուեցաւ նախ Միւթիւնի մէջ 1927-ին, ողբ. Միւթիւն Ալեմշահի միջոցով, որ Կ. Պոլսէն վերադառնալով՝ Միւթիւնի մէջ գտած էր նախկին սանդուղի թիւերուն մը եւ իսկոյն արձարած Միւթիւնը բազմութիւն մը եւ իսկոյն արձարած Միւթիւնը նոր կայծը: Մ. Ալեմշահ Կ. Պոլսոյ դադարեալ Միւթիւն վարչութեան անդամներէն մէկն էր:

Մուրատեան վարժարանի վերաբացումով, 1929-ին, Փարիզի մէջ ալ կ'արձարծէր հուրը նախկին-

ներու Միւթիւն՝ որուն հոգին կ'ըլլային նոյնպէս Կ. Պոլսոյ նախկին վարչութեան քանի մը անդամներ: Այդ Միւթիւնն ալ հոն շարունակեց իր գոյութիւնը, ուր հաստատուեցաւ նաեւ Միւթ. Ալեմշահ:

Մինչ Միւթիւնի Միւթիւնը իրեն կը վերագրէր ուղղակի շարունակութիւնն ըլլալ Կ. Պոլսոյ Միւթիւն, Փարիզիւր իր կարգին՝ իրեն:

Ջանքեր եղան համաձայնութեան, մասնաւոր երկուքին ալ անգամներուն խառն ժողովով մը Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանի մէջ, 1936-ին, հարիւրամեակի շքեղ յորելեանի առիթով:

Երկուքին ալ դիտումը նոյն երախտագիտական սէրն է հանդէպ Բարբարներու եւ Միւթիւնեան Միւթիւնութեան, եւ երկուքին ալ նպատակն է եղած վառ պահել հին ու նոր սերունդներու սրտին մէջ՝ սէրը հայ մշակոյթին եւ ազգութեան:

Հ. Ն. Փ.